


ՆԱՄԱԿ ԳԻՆԵՄՈՒՆԵՐՈՒ ՄԵՂՔԻՆ

ՄԱՍԻՆ

Եւ ո՛ր կարելի է այս աստիճան խելագար մը գտնել, որ չի գիտեր թէ կոյրը գրկուած է արևի յոյսէն: Եւ եթէ այս մէկը գրկանք է, պէտք է գիտնալ, թէ որքա՛ն անելի մեծ է գրկանքը եւ անպանելի է կուրութիւնը անոնց, որոնց համար պարտաւորութիւններու յոյսը խաւարած է եւ որոնք կրնակ դարձած են Սուրբ Գրոց ազդարարութիւններուն եւ որոնք չեն կրնար չարը բարիէն զանազանել եւ ոչ ալ միաբարբ մտածումներ ունենալ: Ըսելիքս հետեւեալն է. եթէ մէկը երկու թունաւոր օձերու հանդիպի ու խորհելով, որ անոնցմէ մէկը կրնայ թունաւոր ըլլալ՝ փախչի անկէ ու աներկիւղ կերպով երկրորդին մօտենայ, արդեօք երկրորդը սարսափելի մահով մը պիտի չմեռցնէ՞ զինք, քանի որ միեւնոյն վնասակար եւ մահացու թոյնը ունի: Նոյնն է պարագան անոնց, որոնք պարտաւորանքներն մէկուն կը հնազանդին եւ երկիւղածութեամբ կը պահեն զայն, սակայն կ'անարգեն եւ կ'արհամարհեն անոր նմանող ուրիշ պարտաւորան մը, որուն համար չափազանց խղճայի կերպով կորուստի կը մարմնոին: Ահաւասիկ, թէ ինչո՞ւ անոնք կորուստի կը մարմնոին: Մենք սորվեցանք Պօղոսէն, բայց մանաւանդ Քրիստոսէն, որ կ'ըսէ. «Գողերը, պոռնիկները, գիւնեմուկները եւ բամբաստողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն...»

(Ճաներ Յովհան Մանդակունի)

ԺԱՄԿՈՉ



Բարդ մառ մըն է, որ կազմուած է ժամ + կոչ բառերով եւ կը նշանակէ եկեղեցի կանչող, եկեղեցի հրաւիրող: Վաղ ժամանակներուն, երբ եկեղեցւոյ ժամերգութիւնը պիտի սկսէր, ժամկոչը մուկուտիկի նման գիւղի փողոցները կը շրջէր եւ ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրէր աղօթելու համար: Ան երգածայն կը յայտարարէր ըսելով «Ժամ է պաշտել զՏէր» (Տէրը պաշտելու ժամն է): Հետզհետէ այս սովորութիւնը տեղի տուաւ կոչնակներու դրուածեան, ժամկոչը կոչնակահարութեամբ սկսաւ ժողովուրդը եկեղեցի հրաւիրել: Իսկ աւելի ուշ ժամանակներուն, յատկապէս քաղաքներուն մէջ, եկեղեցւոյ զանգակատունէն սփռուող զանգին ղօղանջն է, որ սկսաւ ժողովուրդը եկեղեցի հրաւիրել: Այսօր ժամկոչներուն հիմնական եւ կարեւոր պարտականութիւնն է, որոշեալ ժամուն եկեղեցւոյ զանգը զննել, ժամատան ընդհանուր շրջապատէն ներս մաքրութեան հսկել եւ ընթացիկ գործերուն սատար հանդիսանալ:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022 ԹԻՒ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 10.12-19: Բ. Կր. 2.12-3.3: Մր. 6.30-44

Առաքեալները վերադարձան Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին, ինչ որ կատարեցին եւ սորվեցուցին: Յիսուս անոնց ըսաւ. «Եկէ՛ք երթանք ամառի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք», որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալ-գալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած: Հետեւաբար իրենք առանձին նաւակ առին եւ գացին ամառի վայր մը: Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ, թէ Յիսուս ալ անոնց հետ է, շրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր ծովեզերքէն վազելով անոնցմէ առաջ հասան անոնց երթալի վայրը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամբոխը, գթաց անոնց, որովհետեւ հովի չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ երկարօրէն ուսուցանել անոնց: Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ամառի տեղ ենք, եւ արդէն բաւական ուշ է. արձակէ ժողովուրդը, որպէսզի շրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին»: Յիսուս անոնց ըսաւ. «Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք հարցուցին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ երկու հարիւր դահեկան հաց գնենք զանոնք կերակրելու համար»: Յիսուս ըսաւ. «Գացէ՛ք, տեսէ՛ք, թէ քանի՞ հաց ունիք»: Աշակերտները ստուգեցին եւ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: Յիսուս հրամայեց աշակերտներուն, որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, երկինք նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որպէսզի բաշխեն եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑՆ՝ ՅՈՎՅԱՆՆՈՒ
ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՅՈՐԱՅ
ԱՐԴԱՐՈՅՆ

Ս. Յովհաննու Կարապետ

Քրիստոսի գալուստը պատրաստող Աստուածառաֆ մարգարէներու լրումը հանդիսացաւ Յովհաննէս մարգարէն, որ աւետաբեր հրեշտակին բառերով փայց Տիրոջ առջեւէն Եղիայի հոգիով եւ գօրութեամբ (հմմտ. Ղկ. 1.17):

Յովհաննէս իր պատանութիւնն ու երիտասարդութիւնը անցուց նգնական կեանքով, հագաւ ուղտի մագէ շինուած հագուստ մը ու մէջքին կապեց կաշիէ գօտի մը եւ կերաւ վայրի մեղր ու մարախ (հմմտ. Մրկ. 1.6):

Ան երեսուն տարեկանին ժողովուրդը մկրտեց Յորդանան գետին մէջ եւ քարոզեց ապաշխարել եւ մկրտուիլ, որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ (հմմտ. Մրկ. 1.4): Ահա այս շրջանին Յիսուս մօտեցաւ անոր եւ մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ: Այս պատմառով Յովհաննէս ստացաւ Մկրտիչ տիտղոսը: Ան նանչցուեցաւ նաեւ Կարապետ տիտղոսով, Քրիստոսի գալուստը նախապատրաստելուն համար:

Յովհաննէս Մկրտիչ իր կեանքի վերջին օրերուն բանտարկուեցաւ եւ ապա գլխատուեցաւ Հերովդէս թագաւորին հրահանգով, որովհետեւ ան յանդիմանած էր Հերովդէս թագաւորը իր կատարած օրինազանցութեան համար՝ ամուսնացած ըլլալով չմեռած եղբօրը կնոջ հետ:

Յովհաննէս Մկրտիչին գլխատումէն ետք իր աշակերտները առին սուրբին անգլուխ մարմինը եւ թաղեցին գայն: Իսկ գլուխը, աւանդութեան համաձայն, կը մնայ Հերովդէսի պալատին մէջ հողով ծածկուած կաւեղէն անօթի մը մէջ:

Յոր Երանելի

Աստուածաշունչ մատեանի համբերութեան եւ Աստուծոյ կամքին հնազանդութեան ախոյեանը եղաւ Յոր Երանելին: 42 գլուխէ բաղկացած Յորի անունը կրող գիրքին սկիզբը, կը նեկայացուի Հուս երկրին մէջ ապրող մեծահարուստ մարդ մը, որ ըլլալով կատարեալ, արդար եւ Աստուածավախ, Աստուծոյ օրհնութեան կ'արժանանայ եւ գաւակներ կը ծնի: Աստուած ցոյց տալու համար Յորի հաւատարմութիւնն ու համբերութիւնը, գիրքին մէջ պատմուած յատուկ թատերական ներկայացումով, հանգրուան առ հանգրուան կ'արտօնէ, որ կեանքին նեղութիւններն ու դժբախտութիւնները հարուածեն զինք եւ հարստահարելով ու հիւանդացնելով, խեղմ մարդ մը դարձնեն: Սակայն Յոր կրելով այս բոլորը ու նոյնիսկ իր երեք բարեկամներէն լսելով նախատիմքի բառեր, իր հաւատարմութիւնը աւելիով կ'արտայայտէ Աստուծոյ հանդէպ եւ կ'արտասանէ իր նշանաւոր խօսքը. «Մօրս արգանդէն մերկ ելայ եւ հոն մերկ պիտի դառնամ: Տէրը տուաւ եւ Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տիրոջ անունը»: (1.21) Յորի վրայ եկած այս դժբախտութիւններէն վերջ երբ Աստուած կը տեսնէ անոր հաւատարմութիւնը, կ'օրհնէ զինք եւ կրկնապատիկով կը վարձատրէ գայն: Սակէ ետք Յոր 140 տարի կ'ապրի եւ կը տեսնէ իր որդիներն ու թոռները, մինչեւ չորրորդ ազգը (42.16):

Ս.ՈՒՍ.Կ 9.3
Թողուցէ՛ք անզգամութիւնը եւ դուք կ'ապրիք. իմաստութիւնը փնտռեցէ՛ք եւ դուք կը փրկուիք. խոհեմութեան ճամբան բռնեցէ՛ք եւ ճիշդ ձեռով ըմբռնեցէ՛ք խրատը:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԹԵՐԱԿԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԵԼՔ ՄԵՆ Է, ՈՐ ԱՏՈՒՂԾ ԳՈՐԾԷ ՄԵՐ ԿԵՆՆՔԻՆ ՄԷՋ

«Յիսուս կոյրին ձեռքը բռնելով գայն գիւղէն դուրս հանեց, թուրով թրջեց անոր աչքերը եւ ապա ձեռքով դպաւ անոր աչքերուն» (Մր. 8.23): Ինչո՞ւ Յիսուս Բեթսայիդայէն դուրս հանեց կոյրը գայն բժշկելէ առաջ. որովհետեւ ան արժանի չգտաւ, որ Բեթսայիդան ականատես վկան ըլլար նման հրաշքի մը, քանի որ թերահաւատներով լեցուն գիւղ մըն էր (Մտ. 11.21):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Սիրելի եղբայր եւ քոյր, անհաւատութիւնը կամ թերահաւատութիւնը կը կաշկանդէ Աստուծոյ գործունէութիւնը մեր կեանքին մէջ: Աստուած իր հրաշքները չի գործեր մեր կեանքին մէջ՝ եթէ երբեք թերահաւատ կամ անհաւատ ենք: Մարկոս Աւետարանիչ խօսելով Նազարէթ քաղաքին մասին կը հաստատէ, թէ Յիսուս չկրցաւ որեւէ հրաշք գործել հոն (Մր. 6.5-6) եւ ինչո՞ւ, որովհետեւ անհաւատ մարդիկ էին Նազարէթի բնակիչները: Ուստի, հեռու մնանք թերահաւատութենէն, եթէ երբեք կ'ուզենք ականատես վկան ըլլալ Աստուծոյ մեծամեծ գործերուն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ԿԸ ՓՆՏՈՒԵՍ, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 33

Ո՛վ արդարներ, Տիրոջնով ցնծացէ՛ք, ուղիղ վարքով ապրողներուն կը վայելէ օրհնութիւն երգել: Քնարով գոհութիւն յայտնեցէ՛ք Տիրոջ, տասնալար տալիով ներքող երգեցէ՛ք անոր: Նոր երգ երգեցէ՛ք Տիրոջ, քաղցրօրէն ցնծալի՛ց հնչեցուցէ՛ք ձեր նուագարանները: Որովհետեւ Տիրոջ խօսքը անդառնալի է, անոր բոլոր գործերը վստահելի են: Անկկա արդարութիւնն ու իրաւունքը կը սիրէ, աշխարհը Տիրոջ սիրովը լեցուն է: Տիրոջ խօսքով ստեղծուեցաւ երկինքը, անոր շունչով ստեղծուեցան երկնային բոլոր մարմինները: Բոլոր ծովերը կը մէկտեղէ աւազի պէս, ովկիանոսները՝ ջրամբարներու պէս: Ամբողջ աշխարհը թող Տիրոջմէ վախնայ, թող աշխարհի բնակիչները պատկառին անկէ, որովհետեւ ան ըսաւ՝ եւ աշխարհը գոյացաւ, հրամայեց՝ եւ անկկա հաստատուեցաւ: Տէրը կը խափանէ ազգերուն խորհուրդները, ձախողութեան կը մատնէ ժողովուրդներուն ծրագիրները, մինչդեռ Տիրոջ խորհուրդը բոլոր ժամանակներուն համար է, անոր ծրագիրները՝ բոլոր սերունդներուն համար:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳՎՆՔ